	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	TC 01-07#6		
	<b>«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ</b> <b>ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ</b> <b>ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐ</b> <b>(ԹՂԹԱԿՑԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ)</b>	Հաստատման ամսաթիվ 18/12/19	Խմբագրություն 3	Էջ 1/2

Ուժի մեջ է 2019թ. դեկտեմբերի 20-ից

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ  
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ  
Գլխավոր գործադիր տնօրեն

Հ. Անդրեասյան

18 դեկտեմբերի 2019թ.

1. Սույնով սահմանվում են «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունում (այսուհետ՝ Բանկ) թղթակցային հաշիվների բացման, վարման և փակման դիմաց գանձվող սակագները և միջնորդավճարները (այսուհետ՝ Սակագներ):

2. Սույն սակագների ձևավորման հիմքում ընկած են միջազգային բանկային պրակտիկայում ծառայությունների մատուցման գոյություն ունեցող հիմնադրույթները:

3. Սույն սակագները կարող են Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել՝ այդ մասին նախապես Բանկի ինտերնետային կայքում և/կամ այլ հրապարակային աղբյուրներում տեղադրելով:

4. Թղթակից բանկի կողմից որոշակի ծառայության համար սահմանված տիպային փաստաթղթի կամ պայմանագրի ստորագրումը հաստատում է սույն սակագների, ինչպես նաև Բանկի կողմից տվյալ ծառայության համար սահմանված առանձին պայմանների և կանոնների ընդունումը:

5. Սույն սակագներով ուղղակի չնախատեսված, սակայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների, գործառնությունների ու գործարքների պայմանները սահմանվում են Բանկի և թղթակից բանկի միջև կնքված պայմանագրով և/կամ Բանկի այլ սակագներով:

6. Առանձին դեպքերում, հաշվի առնելով թղթակից բանկի՝ Բանկում ունեցած դրամական հոսքերի չափը, հաշիվների մնացորդները, գործարար համբավը, Բանկի հետ համագործակցության ժամանակահատվածը, կարող են առաջարկվել սույն սակագներից արտոնյալ պայմաններով (ոչ ստանդարտ) Սակագներ:

7. Մատուցված ծառայությունների համար սույն սակագներում նշված միջնորդավճարները Բանկի կողմից միակողմանիորեն (անակցեպտ) կարող են գանձվել թղթակից բանկի հաշվից, եթե այլ բան սահմանված չէ թղթակից բանկի հետ կնքված պայմանագրով:

8. Բանկը պատասխանատու չէ անհաղթահարելի ուժի (բնական աղետներ, պետական մարմինների ակտեր, գործադուլ, քաղաքացիական հուզումներ, շրջափակումներ, հեռահաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցում, արտակարգ այլ հանգամանքներ) հետևանքով առաջացած ուշացումների, սխալների և վնասների համար:


9. Բանկը հաճախորդներին ծառայություններ է մատուցում աշխատանքային օրերին<sup>1</sup> Երևանի ժամանակով ժամը 9:30-18:00, բացառությամբ հետևյալ դեպքերի.

- մասնաճյուղերի կողմից ծառայությունների դիմաց վճարումների ընդունում և հաշվարկադրամարկղային սպասարկում՝ աշխատանքային օրերին՝ Երևանի ժամանակով ժամը 9:30-16:30-ը,
- հեռահար եղանակով, ներառյալ՝ ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ սարքերի (այսուհետ՝ ՖԳԻԱՍ) միջոցով ծառայությունների մատուցում՝ աշխատանքային օրերին՝ Երևանի ժամանակով ժամը 9:00-18:00,

ինչպես նաև, եթե Բանկի կողմից այլ բան սահմանված չէ առանձին ծառայությունները կարգավորող պայմաններում, պայմանագրերում, Բանկի ներքին իրավական ակտերում կամ [www.acba.am](http://www.acba.am) Բանկի պաշտոնական կայքում:

Բանկի ներքին իրավական ակտերով և/կամ կոնտրագենտների և/կամ Բանկի հաճախորդների հետ կնքված պայմանագրերով որոշակի շրջանակի կամ առանձին ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց և/կամ անհատ ձեռնարկատերերի համար կարող են սահմանվել Սակագներից տարբերվող այլ սակագներ:

<sup>1</sup> Աշխատանքային օրեր՝ երկուշաբթիից ուրբաթ օրերը (բացառությամբ այն օրերի, որոնք ՀՀ օրենսդրությամբ համարվում են/կհամարվեն ոչ աշխատանքային օրեր), ինչպես նաև այն օրերը, որոնք ՀՀ օրենսդրությամբ համարվում են/կհամարվեն աշխատանքային օրեր:

	<b>ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ</b>		<b>TC 01-07#6</b>	
	<b>«ԱԿՔԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐ (ԹՂԹԱԿՑԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ)</b>		<i>Հաստատման ամսաթիվ 18/12/19</i>	<i>Խմբագրություն 3</i>

1. Թղթակցային հաշվի բացում, վարում, փակում	անվճար
2. Թղթակցային հաշվի քաղվածքի և վճարային փաստաթղթերի տրամադրում	անվճար
3. Հաշվի նվազագույն մնացորդ	
- ՀՀ դրամ	1,000,000 ՀՀ դրամ
- ՌԴ ռուբլի	100 000 ՌԴ ռուբլի
- ԱՄՆ դոլար	3,000 ԱՄՆ դոլար
- եվրո	3 000 եվրո
4. Հաշվի մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	0%
5. Առդիտորական հարցումներ	
- ռեզիդենտ բանկերին	անվճար
- ոչ ռեզիդենտ բանկերին	5 000 ՀՀ դրամ